



Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

The Rev. Dr. Parez Metjian, Pastor

Փետրուար 26, 1996

**Գերաշնորհ Խաժակ Արքեպս. Պարսամեան,
Առաջնորդ Ամերիկահայոց Թեմին
Նիւ Եորք, Ն. Ե.**

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Ս. Սահակ Ս. Մեսրոպ Հայց. եկեղեցւոյ տարեկան անդամական ժողովը տեղի ունեցաւ, Կիրակի, Փետրուար 11ին, յետ Պատարագի, Հոգեւոր Հովիւին հովանաւորութեամբ:

Սոյն ժողովին 251 տրատու անդամներէն 69 տրատու անդամներ ներկայ էին: Ըստ մեր կանոնադրին վաւերական ժողով մըն էր:

Գաղտնի քուէարկութեամբ հետեւեալները ընտրուեցան ծխական խորհուրդի անդամ.-

Բաբգէն Մկրեան՝ 59 քուէ
Դաւիթ Նալպանտեան՝ 52 քուէ
Սուրէն Բախտիկեան՝ 57 քուէ
Պրուս Պալըրտ՝ 57 քուէ

Էտուրըտ Պոյաճեան՝ 52 քուէ
Նուպար Քարակուլեան՝ 50 քուէ
Գառնիկ Թորոսեան՝ 43 քուէ

Ինչպէս նաեւ թեմական Պատգամաւոր ընտրուեցան հետեւեալները -

Ճօրճ Տովլէթեան՝ 61 քուէ
Բաբգէն Մկրեան՝ 54

Տիրան Մազմանեան՝ 48 քուէ
Լուի Քարակուլեան՝ 31 քուէ

~~Վերոյիշեալ թեկնածուները ձեզի կը ներկայացնենք առ ի վաւերացում:~~

Սպասելով ձեր պատասխանին, մնամ

Մատչելով ի համբոյր Ձերդ Ս. Աջոյն

Բարի Քհնյ. Մէթճեան

